ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 12-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը

Մարիա Ազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջին և զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ք. Վաշինգտոն՝ սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 12-ը

4. Հրավիրող կողմը

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության Առևտրի նախարարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Քաղաքային ջրային ռեսուրսների կառավարում» թեմայով դասընթացին:

6. Քննարկված թեմաները

Ամերիկայի Միացյալ Նահանգների մշակութային ռազմավարությունների և ֆեդերալիզմի վերաբերյալ համառոտ ակնարկ:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում կիրառվող ոլորտային միտումների և նորարարական տեխնոլոգիաների ցուցադրությամբ աշխարհի մակարդակով քաղաքային ջրային ռեսուրսների ոլորտի զարգացում:

Եվրասիական երկրների մասնագետների գործարար համագործակցության խթանմամբ ամերիկյան կազմակերպությունների ներգրավվում այդ երկրների զարգացման գործընթացներում:

Դասընթացին մասնակցում էին պատվիրակներ Ուկրաինայից, Ղազախստանի Հանրապետությունից, Ղրղզական Հանրապետությունից, Մոլդովայի Հանրապետությունից, Տաջիկստանի Հանրապետությունից, Ուզբեկստանի Հանրապետությունից:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>

Հանդիպում Xylem կազմակերպության Կենտրոնական Ասիայի մասնագետների հետ (Վաշինգտոն, Կոլումբիա), ծանոթացում ջրերի մաքրման սարքավորումներին՝ մասնավորապես ցիկլիկ, մեմբրանային ռեակտորներին, մոնիթորինգի և կառավարման սարքավորումներին, վերլուծող հաղորդիչների համակարգերին:

Հանդիպում AlexRenew կազմակերպության հետ (Ալեքսանդրիա, Վիրջինիա), ծանոթացում ջրահավաքման և կեղտաջրերի մաքրման, Ալեքսանդրիա քաղաքի ջրի բաշխման և ջրամատակարարման կազմակերպման, ջրահավաքման ավազանների պահպանման հետ:

Հանդիպում Էշբերտոն ֆիլտրման կայանի, Բալտիմոր քաղաքի կոմունալ տնտեսության վարչության հետ (Բալտիմոր, Մերիլենդ), ծանոթացում ջրամատակարարման ստանդարտներին՝ քլորացում, կոագուլյանտացում, նստեցում, ֆիլտրացիա, ֆտորացում, pH-ի կառավարում:

Հանդիպում Բէկ-Ռիվերի մաքրման ավազանների ներկայացուցիչների հետ (Բալտիմոր, Մերիլենդ), ծանոթացում կեղտաջրերի մաքրման գործընթացներին, կեղտաջրերի մաքրման նպատակով օգտագործվող քիմիական հավելումներին:

Հանդիպում Մերիլենդի բնապահպանական ծառայության, Ֆրիդոմ շրջանի մաքրման կայաններիի ներկայացուցիչների հետ (Միլլերսվիլ, Մերիլենդ), ծանոթացում կեղտաջրերի մաքրման գործընթացներին, ջրում առկա սննդային նյութերի հեռացման նպատակով՝ ինտենսիվ մաքրմանը:

Հանդիպում ԱՄՆ շրջակա միջավայրի պահպանության գործակալության (EPA) կեղտաջրերի կառավարման ծառայության հետ (Վաշինգտոն, Կոլումբիա), ծանոթացում շրջակա միջավայրն աղտոտող նյութերի արտանետումը չեզոքացնող ազգային համակարգերին, ջրի որակի քաղաքային պահանջներին և տեխնոլոգիաներին, կոյուղաջրերի նախնական մաքրմանը, բիոսոլիդներին (կոյուղաջրերում առկա կոշտ բիոլոգիական

թափոններ), կանաչ ենթակառուցվածքին, ակտիվների կառավարմանը, համակարգային պլանավորմանը:

Հանդիպում Ուոլնաթ-Կրիկի մաքրման կայանների, Կոշտ կենցաղային թափոնների վերամշակման կայանի (Austin Water կազմակերպություն) ներկայացուցիչների հետ (Օսթին Տեխաս), ծանոթացում կեղտաջրերի մաքրման, պոմպակայանների բարելավման, տիղմի թանձրեցուցիչի վերականգնման, կեղտաջրերի մշակման հետևանքով առաջացած տիղմի վերամշական և բիոսոլիդի ստացման գործընթացներին:

Հանդիպում Նեբրասկա նահանգի համալսարանի երաշտի հետևանքների մեղմացման Ազգային կենտրոնի ներկայացուցիչների հետ (Լինկոլն, Նեբրասկա), ծանոթացում երաշտի հավանականության դեպքում կառավարման, նախապատրաստման, հարմարվողականության և կայունության գործընթացների կազմակերպման, երաշտի դեմ (որպես արտակարգ իրավիճակ), պայքարի միջազգային նախագծերի հետ (ՄԱԿ-ի կոնվենցիա Ուզբեկստանի անապատացման դեմ պայքարի մասին, 2023թ.):

Հանդիպում Սան-Անտոնիոյի ջրային տնտեսության համակարգի (H_2Oaks կենտրոն), Բնապահպանության վարչության ներկայացուցիչների հետ (Էլմենդորֆ, Տեխաս), ծանոթացում ընդերքային աղի ջրերի քաղցրահամեցման, դրա տեխնոլոգիայի և սարքավորումների, նահանգների և ազգային մակարդակում ռեսուրսների պահպանության գործող պրակտիկայի հետ:

Այցելություն WEFTEC 2024 ցուցահանդես (Նոր Օռլեան, Լուիզիանա), որը հանդիսանում է Հյուսիսային Ամերիկայի ջրի որակի ամենամյա խոշորագույն միջոցառումներից: Այն ներառում է այպիսի գլոբալ թեմաներ, ինչպիսիք են ջրի որակը, հասարակական առողջության պահպանումը, ջրի մաքրման ոլորտում կայուն զարգացումն ու նորարարությունները:

Ցուցահանդեսի ընթացքում ծանոթացել եմ նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաների և ծառայությունների հետ, մասնակցել մի շարք քննարկումների՝ հատկապես արտակարգ իրավիճակների ժամանակ և աղետների դեպքում վաղ արձագանքման և կանխարգելման ոլորտում արհեստական բանականությամբ տեխնոլոգիական լուծումների հետ:

Հանդիպում Վիրջինիա նահանգի շրջակա միջավայրի որակի վարչության ներկայացուցիչների հետ (Ռիչմոնդ, Վիրջինիա), ծանոթացում մաքուր ջրի ֆինանսավորման և

աջակցության տրամադրման ծրագրերին, ջրի նախապատրաստման և կեղտաջրերի մաքրման համայնքային շինությունների համար նահանգային կառավարության միջոցների տրամադրման գործիքներին:

Հանդիպում Վերին Օկկովանայի ծառայությունների մատուցման վարչության Միլլարդ Հ. Ռոբբինս կրտս. կեղտաջրերի վերականգնման կայանի ներկայացուցիչների հետ (Ցենտրվիլ, Վիրջինիա), ծանոթացում ազոտի հեռացման բիոլոգիական պրոցեսներին, UOSA վարչության կողմից կեղտաջրերի հնգակի մաքրման մոդիֆիկացման գործընթացին:

Հանդիպում քաղաքային ջրային տնտեսության կազմակերպությունների ասոցիացիայի հետ (Վաշինգտոն, Կոլումբիա), ծանոթացում առաջնային խնդիրներին և քաղաքական հարցերին, կոմունալ ծառայությունների կայուն, նորարարական կառավարմանը, ասոցիացիայի անդամների կողմից տնօրինվող ռեսուրսներին:

Հանդիպում Պոտոմակ ջրաբաշխիչ կայանի ֆիլտրացիոն սարքավորումների (WSSC Water կազմակերպություն) ներկայացուցիչների հետ (Լորել, Մերիլենդ), ծանոթացում խմելու ջրի մաքրման գործընթացներին, ջրահավաք ավազանների պաշտպանությանը:

Հանդիպում Մաքուր ջրի ազգային ասոցիացիայի ծառայության ներկայացուցիչների հետ (Վաշինգտոն, Կոլումբիա), ծանոթացում մաքուր ջրի համայնքային ծառայությունների և կազմակերպությունների շահերի առաջնընթացի հեռանկարներին, մաքուր ջրի գներին, մաքուր ջրի օրենսդրության կառավարմանն ու կիրառմանը, համայնքային մաքուր ջրի բնագավառում նորարարություններին, «Մաքուր ջրի մասին» օրենքի կատարելագործման միտումներին:

8. <u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Մասնակից երկրների կողմից առաջարկվեց ավելի հաճախակի դարձնել նման այցերը, կազմակերպել մասնագետների և փորձագետների փոխայցելություններ՝ ոլորտին աջակցության ցուցաբերման նպատակով և ամերիկյան լավագույն փորձը փոխանցել Եվրասիական երկրներին:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

15.10.2024թ.